



Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լևոն Չիդիյանի և Թեմի երիտասարդական բաժնի տնօրեն Վալերի Բադալյանի նախաձեռնությամբ , թբիլիսահայ երիտասարդների կազմով կամավորական ջոկատը , 2015 թվականի հունիսի 15-ին մասնակցեց բնական աղետի հետևանքներից քաղաքի մաքրման աշխատանքներին:

Առավոտյան ջոկատը մասնակցեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում զոհվածների հոգիների խաղաղության համար հոգևոր սպասավորներ Տեր Սամվել քահանա Թորոսյանի և Տեր Նարեկ քահանա Ղուշչյանի կողմից կատարված հոգեհանգստյան արարողակարգին: Այնուհետև կամավորները զինված բաժերով և այլ անհրաժեշտ պարագաներով, ուղքով հասան ողբերգության վայր՝ Թբիլիսիի Հերոսների հրապարակ և Լագունա Վերելի տարածք ու ծեռնամուխ եղան մաքրման աշխատանքներին: Ակտիվիստները ցեխից ու տիղմից մաքրեցին տարածքը, մասնակցեցին ճանապարհը բացելու գործին: Երիտասարդները աշխատեցին ամբողջ օրը և պատրաստակամություն հայտնեցին շարունակել իրենց մասնակցությունը բարեգործական գործողությանը:



